

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 7 Ապրիլի, 2008

ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի նոր ատենապետ է նշանակուել Վիգէն Սոնենց-Փափազեանը, որը երկար տարիներ իր լայն ծառայութիւնն է բերել Հայ Դատի Յանձնախմբի զանազան ծրագրերի ու աշխատանքների իրագործմանը: Ամերիկահայ նշանաւոր թարգմանիչ ու գրող Թաթուլ Սոնենց-Փափազեանի որդին՝ Վիգէնը ծնուել է Մասաչուսեթսի նահանգի Ուաթըրթաուն հայաշատ քաղաքում: Իր բարձրագոյն կրթութիւնը ստացել է իրաւաբանութեան բնագաւառում, իսկ 1985 թուականից ի վեր ներգրաւել է Հայ Դատի Յանձնախմբի աշխատանքներում: «Անձկութեամբ եմ սպասում կրկին իմ լուծան բերելու Հայ Դատի Յանձնախմբի կողմից արձանագրուող ուշագրաւ յաջողութիւններին», - ասել է Վիգէն Սոնենց-Փափազեանը:



Հայ երիտասարդաց դաշնակցութեան անդամներ՝ Հարաւային Կալիֆորնիայի շրջաններից Մարտ 19-ին, համախմբուել են Գլենդէլում գտնուող ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի կենտրոնում, ուր տեղի է ունեցել հանրային քաղաքականութեանը վերաբերող ամենամտայն հերթական աշխատանիստը: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Գլենդէլի քաղաքապետարանի քարտուղար Արտաշէս Քասախեանը, ծանրանալով ամերիկահայ քուէարկողների արձանագրութեան աշխատանքի կարեւորութեան վրայ, մասնաւորաբար 2008 թուականի Միացեալ Նահանգների նախագահական ընտրութիւնների առիթով: «Այսօրուայ ամերիկահայ երիտասարդները պէտք է օգտագործեն պատեհութիւնները, մասնակցելով ամերիկեան քաղաքական ու ընտրական գործընթացներին», նշել է Քասախեանը: Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի կազմակերպած աշխատանիստերի նպատակն է քաջալերել ամերիկահայ երիտասարդներին, որպէսզի հետաքրքրութիւն եւ գործուն դերակատարութիւն ունենան գաղութի եւ ամերիկեան կառավարական հարցերում:



Շաբաթ, Մարտի 19-ին Սան Ֆրանցիսկոյին մերձակայ Բըրքլի համալսրանում տեղի է ունեցել Հայոց Ցեղասպանութիւնից վերապրողների վկայութիւնների վերաբերեալ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրական բաժանի գլխաւոր գիտաշխատող՝ Վերժինէ Սվազլեանի աշխատութեանը նուիրուած յատուկ միջոցառումը, որը կազմակերպուել էր Շոփաժոցի Հայ Դատի Յանձնախմբի, Բըրքլիի համալսարանի Հայագիտական ուսումնասիրութիւնների կենտրոնի եւ «Համագային» հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Սան Ֆրանցիսկոյի մասնաճիւղի համատեղ ջանքերով: Միջոցառման ընթացում տիկին Սվազլեանը խօսելով իր աշխատութեան մասին, որը պարունակում է Պատմական Հայաստանի մօտաւորապէս 100 շրջաններից վերապրողների վկայութիւններ եւ որը թարգմանուել է անգլերէն, ռուսերէն, թուրքերէն, ֆրանսերէն ու այլ լեզուների, ընդգծել է, որ «Հայոց Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ կատարուած միջազգային քաղաքական ոճրագործութիւն է, որը մեր ազգային ինքնութեան մէկ մասնիկն է դարձել»: Նա նաեւ նշել է, որ իր հանդիպումների եւ հարցազրոյցների ժամանակ, վերապրողները ընդհանրապէս լռում էին եւ չէին ցանկանում պատմել իրենց ապրած արհաւիրքի մասին եւ որ անհրաժեշտ է եղել երկար ժամանակ տրամադրել՝ նրանց վստահութիւնը ապահովելու համար:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Ամերիկայի շրջանի աւելի քան 60 սկաուտներ՝ Հարաւային Կալիֆորնիայից, Ֆրեզնոյից եւ Լաս Վեգասից մասնակցել են «Ազգային Շքանշան» անուամբ ձեռնարկին, որը տեղի է ունեցել Մարտի 7-9, Թեքոյայում գտնուող Հ.Մ.Ը.Մ.-ի նոր բանակավայրում: Միջոցառման նպատակն էր ներկայացնել 19-րդ դարի վերջերի հայկական քաղաքականութիւնը ինչպէս նաեւ անդրադառնալ ամերիկահայութեանը յուզող ներկայիս հարցերին: Յիշեալ միւթերը ներկայացրել է ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի

Յանձնախմբի ատենապետ՝ Րաֆֆի Համբարեանը: Ելոյթից յետոյ սկսուողները հարցումներ են ուղղել բանախօսին եւ ստացել սպառիչ պատասխաններ:



Մարտի 30-ին, Հայ մշակութային հիմնարկութեան Քրեսէնթա հովիտի մասնաճիւղը նշեց իր պատմութեան մէջ նշանակալից մի իրադարձութիւն: Մասնաճիւղը մարտի 17 տարի առաջ գնուած կենտրոնի պարտամուրհակը: Այդ առիթով, Լա Քանիադայի շրջանի «Ֆլինթրիջ» ակումբում կազմակերպուել էր յատուկ երեկոյ, որի ընթացքում բարերար հիւրերը իրենց նուիրատուութիւններով մարտցին կենտրոնի վերջին անսավճարը: Ակնկալուում է, որ մասնաճիւղը այս պարտաւորութիւնից ազատուելով, իր ողջ ուժերը կը կենտրոնացնի ընթացիկ բազմաթիւ ծրագրերի վրայ: Ելոյթ ունենալով միջոցառմանը, Գլենդէլի քաղաքապետարանի քարտուղար Արտաշէս Քասախեանը նշել է, թէ «Քրեսէնթայի հայ երիտասարդութիւնը չունի շատ տեղեր, ուր կարելի է գնալ եւ հայկական պարեր, լեզու եւ պատմութիւն սովորել: Իսկ հայ կենտրոնը այն տեղերից է, ուր մենք կարող ենք համախմբել մեր երիտասարդներին, ընձեռելով նրանց մշակութային աշխատանքների լայն հնարաւորութիւն»: Նշենք, որ Հայկական մշակութային հիմնարկութիւնը ունի բազմաթիւ մասնաճիւղեր, որոնց առաքելութիւնն է ուսուցողական եւ մշակութային ծրագրերի օգնութեամբ մեր ազգային ժառանգութիւնը պահպանել ու փոխանցել նոր սերնդին:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: